ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 25-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀԱՅԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՆՇՈՒՄ ԵՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 25-ԱՄՅԱԿԸ

ԿԱՀԻՐԵ.— Երեկ Կահիրեի ու Ալեքսանդրիայի հայկական գաղութներում տեղի են ունեցել Հայկական ՍՍՌ 25-րդ տարեդարձին նվիրված ժողովներ։ Ելույթ ունեցողները մեծ ոգևորությամբ խոսում էին իր գոյության տարիներում Սովետական Հայաստանի ձեռք բերած հսկայական հաջողությունների մասին։ Բուռն ծափահարությունների ներքո հավաքվածները ընդունեցին ողջույններ ուղղված Ի. Վ. Ստալինին, Հայաստանի կառավարությանը և Ամենայն Հայոց կաթողիկոսին։

***

ԹԵՀՐԱՆ.— Նոյեմբերի 29-ին Թեհրանի հայկական ակումբում տեղի է ունեցել Հայկական ՍՍՌ 25-ամյակին նվիրված նիստ։ Ներկա են եղել Իրանի կառավարության անդամներ, մեջլիսի դեպուտատներ, ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի իրանական ընկերության անդամներ, Թեհրանում հայկական գաղութի բազմաթիվ ներկայացուցիչներ, գիտության ու կուլտուրայի գործիչներ, ժուռնալիստներ, ինչպես նաև ՍՍՌՄ-ի գործերի հավատարմատար Յակուբովը և սովետական դեսպանության աշխատակիցները։

***

ԲՈՒԽԱՐԵՍՏ.— Ռումինիայի «Հայերի ճակատ» հայկական կազմակերպությունը Սովետական Հայաստանի 25-ամյակի առթիվ անց է կացրել հանդիսավոր նիստ, որին մասնակցել են 1.500 հայ։ Նիստին ներկա են եղել ռումինական մինիստրներ Թեոխարի Ժորժեսկուն, Վասիլիու Ռեշկանուն, Կոնստանտինեսկուն, ինչպես նաև ակադեմիկոս Պարխոնը և ռումինական այլ ականավոր հասարակական գործիչներ։ Ներկա են եղել նաև Ռումինիայում ՍՍՌՄ դեսպան Ս. Ի. Քավթարաձեն և գեներալ-գնդապետ Սուսայկովը։ Նիստում հանդես են եկել «Հայերի ճակատ» կազմակերպության նախագահ Դանիելյանը և այդ կազմակերպության գլխավոր քարտուղար Բաբայանը։ Նրանք երկուսն էլ ընդգծել են Սովետական Հայաստանի հսկայական նվաճումները նրա գոյության 25 տարվա ընթացքում։ Ճառերով հանդես են եկել նաև Ս. Ի. Քավթարաձեն և գեներալ-գնդապետ Սուսայկովը։ Բուռն ծափահարությունների տակ ներկա եղողները ընդունել են ողջույնի հեռագիր ուղղված Ի. Վ. Ստալինին։

(«Սովետ. Հայաս.», 7 դեկտեմ. 1945 թ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ 25-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

ԲԵՅՐՈՒԹ.— «Բեյրութում տեղի է ունեցել Հայկական ՍՍՌ 25-ամյակին նվիրված մեծ միտինգ, որ կազմակերպել էր հայկական ազգային խորհուրդը։ Միտինգում ներկա էին Լիբանանի մինիստրների խորհրդի նախագահ Սամի Սոլխը, հայ եկեղեցու կաթողիկոս Գարեգինը, Լիբանանի պառլամենտի դեպուտատները, ականավոր հասարակական և քաղաքական գործիչներ, մամուլի ներկայացուցիչները և այլ անձինք։ Հսկայական դահլիճը լեփ-լեցուն էր։ Փողոցում այն շենքի մոտ, որտեղ տեղի էր ունենում միտինգը, միկրոֆոնների մոտ գտնվում էին հարյուրավոր մարդիկ, որոնք լսում էին հռետորների ճառերը։

«Միտինգում ելույթ ունեցողները խոսում էին Հայկական ՍՍՌ-ում հայ ժողովրդի և ռուս մեծ ժողովրդի եղբայրական բարեկա-

մության շնորհիվ ձեռք բերված հսկայական հաջողությունների մասին։

«Մեծ ճառով հանդես է եկել հայ եկեղեցու կաթողիկոս Գարեգինը։ Կաթողիկոսի ելույթը բազմիցս ընդհատվել է երկարատև բուռն ծափահարություններով։ «Հայաստանի ազատագրման և այնտեղ աշխատավորների իշխանության հաստատման օրը,— ասել է կաթողիկոսը,— հանդիսանում է մեծ տոն ոչ միայն նրանց համար, որոնք գտնվում են Հայկական Ռեսպուբլիկայի տերիտորիայում, այլև ամբողջ աշխարհում ցրված մյուս բոլոր հայերի համար»։

«Հայկական ՍՍՌ գոյության 25-ամյակի տոնակատարությունը Լիբանանում և Սիրիայում անց է կացվել մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ։ Տոնի առթիվ հայկական բոլոր դպրոցներում պարապմունքներ չեղան։ Հայկական բոլոր թաղամասերում անց են կացվել հատուկ ժողովներ ու միտինգներ։ Հրատարակվել են թերթերի ու ժուռնալների հոբելյանական համարներ։ Հայ Եկեղեցու կաթողիկոսն առաջարկել է հայկական բոլոր եկեղեցիներում անցկացնել պատարագ Հայկական ՍՍՌ գոյության 25-ամյակի առթիվ»։

(«Սով. Հայաս.», դեկ. 7, 1945 թ.)

22522-551